

**ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆԿՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿՏԱՆԳ
ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴՆԱ 2020Թ.
ՍԱՐՉԱՅԻՆ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ) ՓՈՒԼ
10-12 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Տևողությունը՝ **120** րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Տեսության և գրավոր առաջադրանքի մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. 1896 թ. օգոստոսի 14-ին հայ նվիրյալները քանի հոգով իրականացրեցին «Բանկ Օտոմանի» օպերացիան

- ա) 30 բ) 29
գ) 40 դ) 31

2. Խանասարի ճակատամարտը տեղի է ունեցել՝

- ա) 1905 թ. գարնանը բ) 1897 թ. ամռանը
գ) 1918 թ. ձմռանը դ) 1914 թ. աշնանը

3. Առաջանշանառումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

- ա) $U = A_{\text{բ}} \times t_{\text{գ}}$ բ) $V_{\text{բ}} = U \times t_{\text{գ}}$
գ) $U = V_{\text{բ}} \times T_{\text{գ}}$ դ) $U = V_{\text{բ}} \times t_{\text{գ}}$

4. Նշվածներից ով չի եղել Հայաստանի Առաջին Հանրապետության զինվորական նախարար՝

- ա) Դրաստամատ Կանայան բ) Հովհաննես Քաջազնունի
գ) Հովհաննես Հախվերդյան դ) Քրիստափոր Արարատյան

5. Ոչ պայթուցիկ արգելափակոցները լինում են՝

- ա) Ականային և արկային բ) Հողային և լարային
գ) Հակատանկային և հակահետևակային դ) Ուղղորդված և ոչ ուղղորդված

6. Հակահատակային ակնային դաշտը, սովորաբար, ունենում է՝

- ա) 300-500 մ ճակատ, 60-90 մ և
ավելի խորություն բ) 100-300 մ ճակատ, 20-50 մ և
ավելի խորություն ավելի խորություն
գ) 50-100 մ ճակատ, 10-40 մ և ավելի
խորություն դ) 200-400 մ ճակատ, 50-70 մ և
ավելի խորություն ավելի խորություն

7. Վարակի ո՞ր խմբին է պատկանում տգային էնցեֆալիտը.

- ա) Ադիքային բ) Մաշկային
գ) Արյունային դ) Շնչառական

8. Հրկիզող գենքի ո՞ր տեսակն ունի բենզինի և թանձրացնող փոշու խարնուրդ՝ բոցավառման բարձր աստիճանով: Կաշուն է, այրվում է նույնիսկ ջրային մակերևույթի վրա, այրման օջախի ջերմությունը հասնում է 1200° C

- ա) Սպիտակ ֆոսֆոր բ) Ֆոսֆոր
գ) Նապալմ դ) Հրահեղ

9. Ինչպե՞ս է կոչվում թաքստոցի հետևում գտնվող գնդակից չխոցվող տարածությունը (թաքստոցի գազաթից մինչև հանդիպման կետը).

- ա) Պատասպարված տարածություն բ) Մեռյալ տարածություն
գ) Պաշտպանված տարածություն դ) Անխոցելի տարածություն

10. Շոկերն ունեն մեկ ընդհանուր ու վտանգավոր ախտանիշ

- ա) Շնչառական սուր խանգարումը բ) Նյարդային խանգարումը
գ) Արյան շրջանառության սուր խանգարումը դ) Մարսողության խանգարումը

11. Հրետանավորը պայթյունը լսել է բռնկումից 21 վայրկյան հետո: Հեռավորությունը մինչև հարվածի տեղը հավասար կլինի՝

$$z = \frac{21}{3} :$$

12. Որն է այրվածների մակերեսի հաշվման «9»-երի եղանակը:

Այրվածքի մակերեսը հաշվելու համար ամբողջ մարմնի մակերեսը բաժանում են առանձին մասերի և արտահայտում տոկոսային ցուցանիշով:

13. Ո՞րն է կոչվում գնդակի հետագիծ:

Այն կոր գիծը, որն արտագծում է գնդակի ծանրության կենտրոնը օդում թռիչքի ժամանակ, կոչվում է հետագիծ:

14. Որոնք են ջերմահարությանը նպաստող գործոնները:

Օրգանիզմի ջերմահարությանը կարող են նպաստել ծանր ֆիզիկական աշխատանքը, քիչ ջուր խմելը, շատ ուտելը, ակոհոլը, ճարպակալումը, ուղեկցող վնասվածքները և այլն:

15. Ինչ է իրենից ներկայացնում իոնացված ալֆա ճառագայթումը:

Իոնացված ալֆա ճառագայթումը իրենից ներկայացնում է ատոմի միջուկից դրական լիցքավորված մասնիկների ճառագայթում (պրոտոնների և նեյտրոնների հոսք): Ալֆան օրգանիզմ է թափանցում սննդի, հեղուկների կամ օդի միջոցով:

16. Կալաշնիկովի 7,62 մմ ավտոմատով կրակում են կրծքային թիրախի վրա՝ 400 մ հեռավորությունից, ձախ կողմից փչող չափավոր քամու դեպքում, ապա քամու ճշգրտումը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta C_{\text{քամու}} = \nu_2 - 2$$

17. 5,45 մմ փամփուշտներով Կալաշնիկովի ավտոմատով կրակելիս ճշգրտումը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta C_{\text{քամու}} = \frac{\nu_2 - 2}{2}$$

18. Ինչի՞ համար են նախատեսված ճառագայթային հետախուզության չափիչ սարքերը:

Ճառագայթային չափիչ սարքերը նախատեսված են իոնացնող ճառագայթների դիտման և գրանցման համար:

19. Բաց ջրամբարների վարակման դեպքում

Դրանցից պետք է օգտվել միայն բժշկական թույլտվությունից հետո:

20. Ինչո՞վ է տարբերվում դիրեկցիոն անկյունը մագնիսական ազիմուտից:

Դիրեկցիոն անկյունը կիրմետրային ցանցի ուղղահայաց գծի հյուսիսային ուղղության և դեպի առարկան ուղղված գծով կազմված անկյունն է, իսկ մագնիսական ազիմուտը՝ մագնիսական միջօրեականի հյուսիսային ուղղության և (ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ) մինչև նշանակետն ընկած հորիզոնական անկյունն է: